3кп2(47.91)
Ж-22

1934

ЦКПО (47 91)
Հ-22
24 SEP 2006
329.150.6(47.91)
1 DEC 2006
ЦЕНТР. ГОСБ.БИБЛИОТЕКА ТССР
ИНВ. № 532 3

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

ՀԿԿ(բ) ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

ՑԵՐԿՐԿՈՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ԸՆԿ. ՇԵԲՈԼԴԱՅԵՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ

ԲԱՆԱՁԵՎԸ

Թարգմ. Վ. Ավագյան

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1934

18 SEP 2013
7716

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Կ 2836 · 63

Սոցիալիստական շինարարության մեծագույն հաղթանակները պրոլետարական դիկտատուրայի առաջին յերկրում— ԽՍՀՄ-ում ուղղակի արդյունք են հանդիսանում նրան, վոր մեր կուսակցությունն ընկ. Ստալինի գլխավորությամբ ուժեղորեն անցկացրեց մեր յերկրում սոցիալիզմի կառուցման Լենինյան հանճարեղ ծրագիրը։ Լենինը պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական խնդիրը դրեց՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պահպանումն ու ամրապնդումը, սեփական սոցիալիստական ծանր արդյունաբերության ստեղծումը, վորի հիման վրա մանր, ցիրուցան, անհատական գյուղացիական տնտեսությունը փոխադրել խոշոր կոլեկտիվ տնտեսության ուղու վրա։

Ստալինի ղեկավարությամբ, մեր կուսակցությունը ջախջախեց հակահեղափոխական տրոցկիզմը և աջ թեքումը կուսակցության ներսում։ Լենինյան կուսակցության ղեկավարությամբ Խորհրդային Միության հերոսական բանվոր դասակարգը, կապիտալիստական դասակարգերի, և ամենից առաջ կուլակության դեմ մղվող անողոք պայքարում, գործով վճռեց արդյունաբերության և գյուղատնտեսության պրոբլեմը, յերկրում կառուցեց սոցիալիստական տնտեսության ամուր հիմքը, գործնականում ապացուցեց մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը։ ԽՍՀՄ բանվոր դասակարգի կողմից վոչ միայն ստեղծված է բոլորովին նոր առաջավոր արդյունաբերություն, վորը յերկիրը հետամնաց ագրարային յերկրից աշխարհի առաջավոր արդյունաբերական յերկրներից մեկը դարձրեց, այլ նաև նրա կողմից լուծվել է պրոլետարական հեղափոխության ամենադժվարին խնդիրը— անհատական գյուղացիական տնտեսության փոխադրումը խոշոր համայնացված գյուղատնտեսության ուղու վրա։ Սրանք են հնգամյակի կատարման մեծ, համաշխարհային—պատմական նշանակություն ունեցող արդյունքները։

Ցերկրորդ հնգամյակի առաջին տարվա նոր հաջողությունները արդյունաբերության և գյուղատնտեսության ասպարիզում—եվ ավելի ամրացրին ԽՍՀՄ՝ որպես միջազգային պրոլետարական հեղափոխության առաջատար ուժ, որպես խաղաղության հենարան՝ ընդդեմ իմպերիալիստական սպանդանոցների, որպես առաջին պրոլետարական պետության զինված ամրոց։ Կուսակցությունը հավատարիմ մնաց այն յերդմանը, որ տվեց ընկ. Ստալինը սրանից տասը տարի առաջ Լենինի դագաղի առաջ։ Ստալինի ղեկավարությամբ կուսակցությունը և մեր յերկրի ու ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը կատարեցին Լենինի գլխավոր պատգամները։ Լենինի—Ստալինի կուսակցությունը մեծ հաղթանակներով ե դիմավորում իր 17-րդ կուսակցական համագումարին։

Ամբողջ յերկրի հետ միասին Հյուսիսային Կովկասի կուսակցական կազմակերպությունը, բանվորները և կոլխոզնիկները վիթխարի հաջողություններ ձեռք բերին յերկրամասի արդյունաբերությունը զարգացնելու գործում, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարիզում, հիմնականում վերացնելով վերջին լուրջ կապիտալիստական դասակարգը—կուլակությունը։ Արդյունաբերության բնագավառում առաջին հնգամյա պլանը կատարվեց 4 տարուց ավելի քիչ ժամանակամիջոցում, տարեց տարի ավելանում են կոլխոզների և սովխոզների ցանքատարածությունները և ապրանքային արտադրանքը, որոնք (կոլխոզները և սովխոզները) իրենց ձեռքում ունեն ցանքատարածությունների և գյուղատնտեսության արտադրանքի մեծ մասը, բարձրացել ե բանվորների և կոլխոզնիկների կուլտուրական-նյութական մակարդակը։

Բայց և այնպես կուսակցական կազմակերպության և, ամենից առաջ, Ցերկրային կոմիտեի կողմից գյուղի աշխատանքում թույլ տրված սխալները, որոնց մասնացույց արավ ընկ. Ստալինը Կենտկոմի հունվարյան պլենումում (1933 թիվ), հնարավորություն տվին կուլակության մնացորդներին, անկախականներին, սպիտակ-գվարդիականներին, ոգտագործելով կոլխոզնիկների հետամնաց խավերի մանրբուրժվական տրամադրությունները, 1932 թվի աշնանը կազմակերպել հացամթերման, աշնանացանի և այլ գյուղատնտեսական աշխատանքների սաբոտաժ յերկրամասի կոլխոզներում, առանձնապես Կուբանում։ Միայն ընկ. Ստալինի ուղղակի ցուցմունքով, Կենտկոմի և կառավարության հսկայական ոգնությամբ, ընկ. Կաղանովիչի անմիջական մասնակցությամբ ե՛ր, որ կուսակցական կազմակերպությունը, ամրապնդվելով ՄՏ կայանների և սովխոզների քաղրաժիններով ստեղծմամբ, խորտակեց սաբոտաժը և վերակառուցեց ղեկավարության մեթոդները գյուղում։

Կոնֆերանսը նշում է, որ Ցերկրկոմը բարեխղճորեն մերկացրեց և ուղղեց իր սխալները և բոլշևիկորեն գլխավորեց պայքարը կուլակային սաբոտաժի դեմ, վերակառուցեց կուսակցական կազմակերպության աշխատանքը։ Դրա շնորհիվ յերկրամասը առաջին լուրջ հաջողություններ ձեռք բերեց՝ կոլխոզները որպես բոլշևիկյան կոլխոզների ամրացնելու գործում։ Արմատապես փոխվեց կոլխոզնիկների և կոլխոզնիկուհիների վերաբերմունքը հանդեպ հանրային սեփականությունը և աշխատանքը։ Զգալի չափով աճեց կոլխոզների արտադրական ակտիվությունը (1933 թվին մի աշխատունակը ձեռք է բերել 143 աշխոր, իսկ 1933 թվին—200 աշխոր)։ Գարնանացանն անցկացվեց կոլխոզնիկների արտադրական հսկայական ակտիվությամբ և զգալիորեն ավելի լավ՝ քան անցյալ տարիներ։ Բարձրացավ կոլխոզնիկների բարեկեցությունը, որոնց մի մասն այս տարի արդեն ունեվոր դարձավ (յերկրամասում չկա մի կոլխոզ, որը մի աշխորին 2 կիլոգրամից պակաս ունենա, մոտ 22 % աշխորին ունեն 5 կիլոգրամից ավելի)։ Աճել ե անասնաբուծական սոցիալիստական սեկտորը։ Հացահանձնման պլանը կատարվել ե լրիվ 2 ամիսով ավելի շուտ, քան անցյալ տարի, կատարված են մյուս պետական պարտավորությունները։ Գարնանացանի սերմացույցով յերկրամասը լիովին ապահովված ե։

Կուսակցական կոնֆերանսն առանձնապես կարևոր ե համարում մատնանշել, որ այս հաջողությունները միայն առաջին հաջողություններ են և, որ գլխավորն ե, չհրապուրվել նրանցով, չգերագնահատել նրանք, թույլ չտալ թուլացնելու կուսակցական կազմակերպության դորահավաքվածությունը դժվարությունների դեմ մղվող պայքարում, դժվարություններ, որոնք կանգնած են կոլխոզների և սովխոզների վերջնական ամրացման ճանապարհին, քանի որ յերկրամասի գյուղատնտեսության հետամնացությունը դեռ վերջնականապես չի հաղթահարված։

Կոնֆերանսն առանձնապես նշում է այն վճռական դերը, որ պիտի խաղացին ՄՏ կայանների և սովխոզների քաղրաժինները սաբոտաժը խորտակելու և աշխատանքը վերակառուցելու ասպարիզում և համարում է, որ ընկ. Ստալինի նախաձեռնությամբ քաղրաժինների ստեղծումն հենց ապահովեց այս հաջողությունները։

Ղեկավարման գրասենյակային բյուրոկրատական մեթոդները, աշխատանքը նոր պահանջների համաձայն վերակառուցելու անընդունակությունը քարածխային, նավթային և արդյունաբերության այլ ճյուղերում—դանդաղեցրին արդյունաբերական արտադրանքի աճման տեմպերը։ Կան դեպքեր, յերբ առանձին ձեռնարկություններ նույնիսկ իջեցրին արտադրանքը 1932 թվի համեմատությամբ։ Առանձնապես շատ հետ եյին մնացել քարածուխը (Սևկավուղլ), և ապա նաև Գրոզնեֆթը։ Դոնբասի մասին Կենտկոմի պատմական վորոշման և Կենտկոմի ու Յերկրկոմի ձեռք առած միջոցների շնորհիվ եր միայն, վոր խորտակվեց այս վորոշումների սաբոտաժը, աշխատանքի վերակառուցման գործում ձեռք բերվեցին լուրջ հաջողություններ, Սևկավուղլում, հետևաբար և այս հիման վրա նաև արդյունահանման լուրջ վերելք։ Գրոզնեֆթը ներկայումս էլ դեռևս չկարողացավ հաղթահարել իր հետամնացությունը։ Դրա հետևանքով յերկրամասում արդյունաբերության ընդհանուր արտադրանքի (առանց նավթի) աճման տեմպերը 1931 թվին կազմում եր 17 տոկոս, 1932 թվին արդյունաբերության ընդհանուր արդյունքի աճը—13 տոկոս, և 1933 թվին—8 տոկոս։

Կոնֆերանսը նշում ե, վոր 1933 թվի յերկրորդ կիսամյակում և մանավանդ վերջին ամիսներին զգալիորեն բարձրացավ արդյունաբերության արտադրանքը (բացի նավթի), քարածխի, մետաղագործության, մեքենաշինության, սննդային արդյունաբերության և այլ ճյուղերի ասպարեզում, հասնելով այնպիսի մակարդակի, վորը նշանակալից չափով գերազանցում ե անցյալ տարվա համապատասխան մակարդակը։

Առանձնապես կոնֆերանսը գոհունակությամբ ե նշում ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականության, խոտանի և գործալքումների պակասեցման առաջին հաջողությունները, վորոնք վերջին ամիսներում բնորոշ են արդյունաբերության ձեռնարկությունների հիմնական մասսայի համար և ցույց են տալիս արդյունաբերության աշխատանքը 17-րդ կոնֆերանսի պահանջներին համապատասխան վերակառուցելու և լավացնելու հաջողությունները։

Բայց և այնպես արդյունաբերության աշխատանքի այս վորակական հաջողությունները միայն առաջին հաջողություններ են հանդիսանում և հեռու յեն բավարար լինելուց։ Նոր տեխնիկայի յուրացումը դանդաղորեն ե ընթանում, արտադրվող ապրանքների վորակը, մանավանդ թեթև և սննդային արդյունաբերության, դեռ անբավարար ե։

Առաջվա նման յերկրամասի տնտեսության նեղ տեղը յերկաթուղային և ջրային տրանսպորտի աշխատանքն ե հանդիսանում ե (տոննա—կիլոմետրներով հաշված՝ փոխադրությունը 1931 թվին 9,712 միլիոն ե, 1932 թվին—9.900 միլիոն, 1933 թվին—9.626 միլիոն), վորը, քաղբաժինների կազմակերպման շնորհիվ թեև տալիս ե արդեն աշխատանքի վերակառուցման մի շարք որինակներ և նմուշներ (Կուտաֆինի մեթոդը և այլն), սակայն դեռ չի կարողացել վերջ տալ աշխատանքի գրասենյակային բյուրոկրատական մեթոդներին և բոլշևիկորեն, լրիվ անցկացնել Կենտկոմի և Ժողկոմխորհի վորոշումը տրանսպորտի մասին։

Աշխատավարձի աճումը, ձեռնարկությունների սեփական պարենավորման բազաների կազմակերպումը, բանվորների նյութական-կուլտուրական պայմանների լավացումը, կոլխոզներում բնամթերային և դրամական յեկամուտների ավելացումը մի աշխորին, ոգնություն անձնական անասնաբուծության զարգացման գործում, ապրանքաշրջանառության ծավալումը և լայնասպառ ապրանքների արտադրությունը—հանդիսանում են բանվորների և կոլխոզային մասսաների բարեկեցության և կուլտուրական պահանջների արագ աճման նյութական բազան։

Կուսակցության գլխավոր գծի անցկացումը, լենինյան ագրային քաղաքականության ճիշտ կենսագործումը, առաջավոր կոլխոզնիկների անձնվեր պայքարը բոլշևիկյան կոլխոզների համար, վորպիսին գլխավորել ե Յերկրկոմը, ռայկոմների, վորոնք նշանակալից չափով վերակառուցել են իրենց աշխատանքները, ՄՏԿ և սովխոզների քաղբաժինների աշխատանքը, անկասկած կոլխոզային լայն մասսաների մեջ առաջ բերեցին վճռական բեկում դեպի լավը՝ հիմնական հարցում—վերաբերմունքը դեպի հասարակական սեփականությունը և կոլխոզային աշխատանքը, լավացրին գյուղատնտեսության և արդյունաբերության աշխատանքը։

Կոնֆերանսը մատնանշում ե, վոր չնայած գյուղատնտեսությունը հետ ե մնում մի շարք բնագավառներում, մանավանդ աշխատանքների վորակի ասպարեզում (ցանքսի և բերքահավաքի ժամկետների ուշացումը, զգալի կորուստներ, դաշտերի աղտոտվածությունը և այլն), այնուամենայնիվ յերկրամասի գյուղատնտեսությունը գտնվում ե բոլշևիկյան վերելքում։ Հիմնականում հաղթահարված ե յերկրամասի գյուղատնտեսության յերկարատև հետամնացությունը։

Կոնֆերանսը Յերկրկոմի քաղաքական գիծը համարում ե ճիշտ, կազմակերպչական աշխատանքը բավարար, ինչպես նաև բավարար ե համարում ԲԳՏ-ՎՀ-ի աշխատանքը։

I. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՎ 1934 Թ. ՀՍԿԻՉ ԹՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ 2-րդ հնգամյակի հսկիչ թվերին վորպես նախնական յերկրամասի ժողովրդական տնտեսության զարգացման 1934 թվի հսկիչ թվերին:

Հանձնարարել Յերկրկոմին 1934 թվին բաժանել յերկրորդ հնգամյակի հսկիչ թվերը յերկու նոր կազմված յերկրամասերի մեջ (Ազով-Սևծովյան և Հյուսիսային Կովկասի), համաձայն շինարարության օբյեկտների նախագծված տեղավորման յեվ յուրաքանչյուր յերկրամասի տեսակարար կշռի:

II. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Վորպես ամենագլխավոր խնդիր, կոնֆերանսը կուսկազմակերպության առաջ դնում է գյուղատնտեսության հետամնացության լրիվ վերացումը 1934 թվին, հասնելով բարձր ու կայուն բերքատվության և անասնապահության աճման: Այդ խնդիրը կարող է լուծվել աշխատանքային կարգապահության ամրացումով, կոլխոզնիկների ամբողջ մասսային ներգրավելով դեպի ազնիվ աշխատանքն ու կոլխոզային սեփականության պահպանումը, տիրապետելով մեքենական տեխնիկան և լրիվ օգտագործելով մեքենաները կոլխոզներում ու սովխոզներում և լայն ծավալով անցկացնելով ագրոմիջոցառումներ սովխոզների ու կոլխոզների դաշտավարության մեջ:

Այդ նպատակով պարտավորեցնել —

ա) ավարտել գարնանացանի կամպանիայի ամբողջ պատրաստությունը վոչ ուշ, քան մարտի մեկը: Նույն ժամկետին ամբողջովին ավարտել նաև տրակտորների ու գյուղատնտեսական ամբողջ ինվենտարի նորոգումը, սերմացվի լրիվ զտումն ու պատրաստումը ցանքի համար, պատրաստել ու վերապատրաստել տեխնիկական ղեկավար կադրերին, միանգամայն աշխատունակ դրության հասցնել ձիերին, գարնանացանի արտադրական պլանները կազմել ու հասցնել մինչև բրիգադները և քննարկել այդ առաջադրությունները կոլխոզնիկների ժողովներում, հասցնել մինչև սովխոզների բաժինները, նաև ավարտել պայմանագրերի կնքումը ՄՏԿայանների ու կոլխոզների միջև, վոչ ուշ, քան մինչև փետրվարի 10-ը:

բ) կրճատել, վերջին տարիների համեմատությամբ, վոչ պակաս քան մի յերրորդով վաղացան և ուշ ցանվող (յեգիպտացորենի, կորեկի) կուլտուրաների գարնանացանի ժամկետները:

Յերկրկոմը պետք է սահմանի վաղ և ուշ ցանվող կուլտուրաների համար վերջին ժամկետներն առանձին ռայոնների համար: Գարնանավարն անցկացնել բացառապես գութաններով՝ առանց բացատների, ապահովել մոլախոտերով վարակված բոլոր հատիկայինների քաղհանը, և առնվազն կրկնակի քաղհանել բոլոր շարատունկերը:

Կոնֆերանսը պարտավորեցնում է Յերկրկոմին, ռայկոմներին և քաղբաժիններին, ապահովել տեսակավոր կուլտուրաների ցանքը վոչ պակաս, քան 2 միլիոն հեկտար տարածությամբ, վոչնչացնել մոլախոտերը վոչ պակաս, քան 3 միլիոն հեկտար տարածության վրա, հողի նախացանքային ճիշտ մշակման միջոցով և ապահովել բրիգադային դաշտակայանների պատրաստումը:

գ) հաշվի առնելով, վոր գյուղատնտեսական աշխատանքների վճռական հաջողությունը կախված է նախ և առաջ գյուղատնտեսության նոր տեխնիկայի, ամենից առաջ — տրակտորի, կոմբայնի և կալսիչի յուրացումից, վորոնք առ այժմ աշխատում են մոտավորապես իրենց հզորության միայն կեսի չափ, կոնֆերանսը պարտավորեցնում է ռայկոմներին, քաղբաժիններին, ՄՏԿայանների ու սովխոզների դիրեկտորներին, ապահովել նրանց լավորակ նորոգումը, վերացնել դիմազրկությունը մեքենաների աշխատանքներում և մտցնել ուժեղ կարգապահության ու պատասխանատվության մեքենաներն սպասարկող բանվորների ու կոլխոզնիկների աշխատանքում, վորպեսզի ապահովվի տրակտորի արտադրական աշխատանքը վոչ պակաս, քան տարեկան 400 ժամ, յուրաքանչյուր առանձին մեքենա կատարի իր նորմաները, վճռապես վերջ տալ մեքենաներին վնասարար ու թափթփված վերաբերվելու ամեն մի փաստին:

Կոնֆերանսն ընդգծում է, վոր տրակտորների արտադրական հզորությունը լրիվ օգտագործելու խնդիրը հանդիսանում է ՄՏԿայանների ու սովխոզների տնտեսական գործունեության կենտրոնական խնդիրներից մեկը:

դ) յերկրային, ռայոնական մարմինների, ՄՏԿայանների կողմից վճռաբար լավացնել սովխոզների ու կոլխոզների պլանավորումը, ժամանավորապես ապահովել կուլտուրաները, առաջին հերթին տեխնիկականների ճիշտ տեղադրումը ռայոնների միջև, վերջ տալ կուլակային հերթականությանը կոլխոզի աշխատանքներում, ճիշտ համադրել տրակտորի և կենդանի լծկանի աշխատանքները, պլանային, նորմալ ձևով վարել տնտեսությունը կոլխոզներում: Կոնֆերանսը բոլորովին անհանդուրժելի յե համարում, յերբ կոլխոզներն ու սովխոզներն իրենց գործնական

աշխատանքում ապրում են միայն այսորվա որով և բաց են թողնում այնպիսի կարևորագույն խնդիրներ, ինչպես սև ցելը, ուշնանավարը, հնձած տարածությունների վարելը և այլն, առանց վորոնց չի կարելի մտածել կուլտուրական տնտեսության և բերքատվության բարձրացման մասին։

ե) կոնֆերանսը նախազգուշացնում է կենդանի լծկանի (ձիու, յեզի) նշանակության թերագնահատության դեմ, վոր շարունակվում է կոլխոզներում, քանի վոր այդ լծկանը տրակտորի հետ միասին վճռական դեր է խաղում գյուղատնտեսական աշխատանքներում. կոնֆերանսը պահանջում է լավացնել նրա (լծկանի) խնամքը, ստեղծել կոպիտ և ուժեղ կերի անձեռնմխելի ֆոնդ զարնանացանի համար։ Կոնֆերանսը խնդիր է դնում 1934 թվին ավելացնել ձիերի քանակը 10—15 տոկոս։ Խոշոր յեղջյուրավոր անասունների աճումը 1934 թվին հասցնել 17 տոկոս, վոչխարների և այծերի քանակը — 21 տոկոս, իսկ խոզերի քանակը 46 տոկոս։ Առանձնապես վճռականորեն առաջ տանել խոզապահությունն ու վոչխարապահությունը։ Կոնֆերանսը միաժամանակ խնդիր է դնում մեծացնել մթերատու անասնապահությունը, վորը դեռ մնում է գյուղատնտեսության ամենահետամնաց մասերից մեկը և մոտակա յերկու տարում վերացնել կոլխոզնիկների կովազրկությունը։ Յերկրամասի յուրաքանչյուր կոլխոզի առաջ, վորպես պարտադիր խնդիր, դնել անասնապահական ֆերմայի կազմակերպումը, թեկուզ առաջին շրջանում փոքր չափով։

զ) հավանություն տալ կոլխոզների և սովխոզների տեղի ունեցող ապախոշորացմանը և պարտավորեցնել Յերկրկոմին ապահովել ապախոշորացման ամբողջ աշխատանքի ավարտումը վոչ ուշ, քան մինչև փետրվարի 10-ը։

ը) հատատ ամրացնել ցանքատիրանակության համար անջատված դաշտերը կոլխոզներում և բրիգադներում, թույլ չտալով նրանց խախտումը ցանքի ընթացքում։

թ) համարելով անբավարար Յերկրային հացահատիկային Տրակտորակենտրոնի և Զեռնոտրեստի աշխատանքը և հաշվի առնելով հողային մարմինների աշխատանքի ընդհանուր հետամնացությունը, առաջարկել Յերկրկոմին արմատապես վերակառուցել Յերկրհողվարչության և սովխոզների ժողկոմատի ներկայացուցչի աշխատանքները հաշվառման պլանավորման, ղեկավարության և ՄՏԿ-ների ու ռայոնների մատակարարման ասպարեզում, վորպեսզի ապահովվի յուրաքանչյուր առանձին ռայոնի, ՄՏԿ-ի և սովխոզի ոպերատիվ և գործնական ղեկավարությունը։

ժ) ամեն կերպ աջակցել և զարգացնել սոցիալիստական մրցման մեծ շարժումը կոլխոզներում և բրիգադներում («250» բրիգադներ, «300» տրակտորային բրիգադներ, «150» գյուղխորհրդները և այլն), աջակցել անկուսակցական կոլխոզային ակտիվի կազմակերպմանը, ներգրավել կոլխոզնիկների ու կոլխոզնիկուհիների բոլոր շերտերին (յերիտասարդությանը, ծերերին, պիոներներին) դեպի ակտիվ պայքար կոլխոզների ամրացման համար։

Բոշնիկյան կոլխոզների համար տարվող պայքարի հիմնական խնդիրը կոնֆերանսը համարում է հասարակական սեփականությանը և կոլխոզային աշխատանքին ազնվաբար վերաբերվելու մասին ընկեր Ստալինի ցուցումների կատարումը, ծուլության, աշխատանքին ու արտադրության գործիքներին անփույթ վերաբերվելու, խարդախության և վնասարարության ամեն տեսակ արտահայտության բնաջնջումը։ Մասնավորապես կոնֆերանսը խնդիր է դնում, վորպեսզի յուրաքանչյուր աշխատունակ կոլխոզնիկ, ակտիվ մասնակցելով կոլխոզային աշխատանքին 1934 թվի ընթացքում, վաստակի վոչ պակաս, քան 250—300 աշխոր, վորպեսզի արդեն 1934 թվին վերացվի առանձին ռայոնների, ՄՏկայանների, կոլխոզների և բրիգադների հետամնացությունն աշխատանքներում։

Հենվելով կոլխոզների խոշորագույն հաջողությունների որինակի վրա, ծավալել անհատականներին կոլխոզները ներգրավելու աշխատանքը և նորից կոլխոզի մեջ ընդունել սաբոտաժի ժամանակ դուրս արվածներից նրանց, վորոնք իրենց հետագա վարքով ապացուցին, վոր հասկանում են իրենց սխալները և ձգտում են աշխատել բարեխղճորեն։ Միևնույն ժամանակ ըդգաստորեն հետևել, վորպեսզի կոլխոզներում չթափանցեն անհարազատ, վնասարար տարրեր։

Կոնֆերանսը նախազգուշացնում է ղեկավարման և ցանքսի կազմակերպման նշանակության թերագնահատության դեմ անհատական սեկտորում և առաջարկում է ապահովել այդ սեկտորի ցանքսի պլանի լրիվ կատարումը։

III. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Յերկրամասում արդյունաբերական լայն շինարարությունն ապահովելու (17-րդ համագումարի թեզիսները) և արդյունաբերության արտադրանքի աճման տեմպերը վճռականորեն ավելացնելու (միջին թվով 25 տոկոս յերկրորդ հնգամյակի հետագա տարիներում) և ամենից առաջ նրա (արդյունաբերության)

աշխատանքի վորակը լավացնելու համար, կոնֆերանսը յերկրամասի բոլոր ձեռնարկությունների արմատական և հիմնական խնդիրը համարում է նոր տեխնիկայի և նոր արտադրությունների յուրացումը, արդյունաբերության աշխատանքի վոչ միայն քանակական, այլ և գլխավորապես վորակական ցուցանիշների հետագա վճռական լավացումը (աշխատանքի արտադրողականության բարձրացումը, ինքնարժեքի իջեցումը, արտադրանքի վորակի և տեսակի լավացումը և այլն), արդյունաբերության աշխատանքում ընկեր Ստալինի 6 պայմանների հետագա արմատացումը։ Այդ նպատակով կոնֆերանսը պարտավորեցնում է Յերկրկոմին.

ա) 1934 թվի ընթացքում ստուգել և ապահովել արդյունաբերության ղեկավարության հետագա վերակազմությունը Դոնբասի մասին յեղած կենտկոմի վորոշման և կազմակերպչական հարցերի մասին յեղած 17-րդ համագումարի վորոշումների հիման վրա—առանց բացառության յերկրամասի արդյունաբերության բոլոր ճյուղերում, նախ և առաջ հետևյալ ամենահետաքրքիր ճյուղերում.—Մայկոպի նավթարդյունաբերության, ցեմենտի արդյունաբերության, շինանյութերի արդյունաբերության, կաշեղենի, կարի և անտառային արդյունաբերության, և արդեն 1934 թվին լրիվ հաղթահարել նրանց հետամնացությունը, վճռաբար խիստ պատասխանատվության յենթարկելով վերակազմության սաբոտաժնիկներին։

Կազմակերպել ոպերատիվ-տեխնիկական հսկողություն վորակի, արտադրվող արտադրանքի կոմպլեկտավորության վրա՝ արդյունաբերությունը ղեկավարող մարմինների, մատակարարող—վաճառող կազմակերպությունների կողմից և կազմակերպել մասսաների հսկողությունն այդ բանի վրա։ Այդ տեսակետից առաջնակարգ խնդիրը համարել սննդային արդյունաբերության արտադրանքի վորակի բարելավումը։

Մուծել տեխնիկական (իսկ սննդային արդյունաբերության մեջ նաև սանիտարական) մինիմում յերկրամասի բոլոր ձեռնարկություններում, կարևորագույն վորակավորների և բանվորական խմբերի համար։

Վերացնել արտադրանքի սեզոնային իջեցումները և արտադրության ընթացքի հետագա տենդագին կորագիծը (վերելքը) ձեռնարկություններում։ Դրա համար խնամքով կազմակերպել նախապատրաստական աշխատանքները, համաչափ և լրիվ մատակարարել հումույթ և կիսամշակված նյութեր և յուրացնել տեխնոլոգիական պրոցեսը։

Արտադրական պրոցեսի նորմալ ընթացքը ապահովել չկարողացող տնտեսավարներին համարել վորպես ձեռնարկությունները ղեկավարելու անընդունակ, վորոնց պետք է հեռացնել ու փոխարինել։

բ) կոնֆերանսը գտնում է, վոր մատնանշված խնդիրները կարող են լուծվել միայն ցեխի ու բրիգադի վրա յեղած ղեկավարության ընդհանուր բարելավման դեպքում (լավագույն մասնագետների ու աշխատողների տեղափոխումը դեպի ցեխերը, բրիգադները, ամենորյա պլանավորումներ, բանվորների արտադրողական խորհրդակցություններ և այլն) աշխատավարձի քաղաքականությունը ճիշտ անցկացնելով և վճռաբար ամրացնելով աշխատանքային կարգապահությունն ու պատասխանատվությունը կատարած աշխատանքի համար յուրաքանչյուր բանվորի և վարչական-տեխնիկական աշխատողի կողմից։

գ) Աղով-Սևծովյան յերկրամասի արդյունաբերության ընդհանուր արտադրանքի աճումը 1934 թվին հասցնել 19,8 տոկոս, այդ թվում ածխային արդյունաբերությունը—23,4 տոկոս, նավթայինը -24,3 տոկոս, գյուղատնտեսական մեքենաշինարարությունը—26 տոկոս, թեթև արդյունաբերությունն և սննդային արդյունաբերությունը—վոչ պակաս, քան 20 տոկոս։

Հասցնել ինքնարժեքի իջեցումն ամբողջ արդյունաբերության մեջ 1934 թվին 4,7 տոկոս։

Հավանություն տալ արդյունաբերության կապիտալ շինարարության ներդրման նախագծին 1934 թվին 210,1 միլիոն ռուբլի, հանդեպ 1933 թվի 167,6 միլիոնի։

Հանձնարարել Յերկրկոմին, կենտրոնի սահմանած վերջնական գումարների (լիմիտների) համեմատ մացնել անհրաժեշտ ճշտումներ 1934 թվի արտադրանքի և կապիտալ ներդրումների նախագծման մեջ։

դ) ձեռք բերել վճռական բեկում Նովոշերկասկի շոգեկառքային գործարանի շինարարության տեմպերում, ծավալել Կամինսկի (արհեստական հյուսվածքների) գործարանի շինարարությունը, ապահովել Լաբա-Վոսկա դրագի (քերիչի) գործարկումն ընթացիկ տարում, յերեք նոր շախտերի և Մայկոպի նավթի 53 հորերի ու Կուբան-Սևծովյան նավթի 10 հորերի գործարկումը։ Կուբանում (Կրասնոդարում և այլն) խոշոր գործարան կառուցելու հարցը դնել։ Ապահովել յերկրամասի գործարանների ընդլայնումը և լրիվ վերակառուցումը, առաջին հերթին Տագանրոգում ու Ռոստովում առանձնապես նոր խո-

ղովակի գործարանի յերկրորդ հերթի ավարտումը և «Կրասնի Կոտելշչիկ» գործարանի վերակառուցման լրիվ ավարտումը, իսկ այս տարվա առաջին կեսում—ձուլիչ թմբուկների ցեխի հավաքումն ու գործարկումը։ Խնդիրը դնել ամբողջովին ավարտելու Արտյոմգեսը 1934 թվին, Ամվրոսիյեվսկի հզորդիչ Տագանրոգում և սկսել Նեսվետայեվսկի կայանի շինարարությունը։

ե) Նկատի ունենալով տեղական և տնայնագործական արդյունաբերության զարգացման ահագին հնարավորությունների առկայությունը, հատկապես լայնասպառի և սննդային արտադրանքի ու կուլտ. ապրանքների վերաբերյալ, միջոցներ ձեռք առնել զարգացնելու տեղական արդյունաբերությունը ռայգործկոմների ու գյուղխորհուրդների անմիջական ղեկավարության տակ և տնայնագործական արդյունաբերությունը կոլխոզներում, նաև վերակառուցել տնայնագործ—արդյունագործական արտելները յերկրային մասնագիտացված միավորումների և ռայոնական խմբակների հիման վրա, միաժամանակ ամեն կերպ ուժեղացնելով նրա ղեկավարությունը տեղական կուսակցական և խորհրդային մարմինների կողմից։

Կոնֆերանսը նշում է—բանվորական մասսաների քաղաքական ու արտադրական ակտիվության նոր ահագին վերելքը, սոցիալիստական մրցման և հարվածայնության նոր, ավելի բարձր աստիճանը, վորոնք տանում են դեպի տեխնիկայի տիրապետումը և արտադրանքի վորակի բարձրացումը (տեխնիկական մինիմումի քննություն տալը, Իզոտովյան շարժումը, աշխատանքի բարձր կուլտուրայի վարպետները, հին զվարդիան—վորակի տեսչությունը) և գտնում է, վոր գլխավոր խնդիրը հանդիսանում է վորակի բարելավումը և կապված պայմանագրերի կոնկրետությունը, նրանց կատարման ստուգումը և մրցման կենտրոնացումը տեխնիկան ու արտադրության վորակը տիրապետելու գործում։

Կոնֆերանսը պարտավորեցնում է, համաձայն կուսակցության համագումարի յերկրորդ հնգամյակի վերաբերյալ վորոշումների, հասնել բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների նյութական-կենցաղային ու կուլտուրական դրության բարելավման, բարձրացնելով նրան յերկրորդ հնգամյակի ընթացքում 2—3 անգամ։

Հանձնարարել Յերկրկոմի նոր կազմին, առանձնապես նայել Ռոստովի քաղաքային տնտեսության բարեկեցության և վերակառուցման հարցը։

IV. ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Հավանությունն տալ Հյուսիսային Կովկասի 1934 թվի յերկաթուղային բեռների փոխադրումների 28 միլիոն տոնն առաջադրությանը, ներառյալ և փոխադրումների ընդունումը մյուս ուղիներից (հանդեպ 1933 թվի 19,5 միլիոն տոննի) նույն թվում 12.275 հազար տոն նավթամթերքների (հանդեպ 1933 թվի 6.685 հազար տոնի) և նշված 100 միլիոն ռուբլու կապիտալ ներդրմանը։

Կոնֆերանսը խնդիր է դնում Հյուսիսային Կովկասի և Հարավ-Արեվելյան յերկաթուղիների քաղբաժինների, վարչությունների, բանվորների և տեխնիկական անձնակազմի առաջ մոտակա ժամանակներում տրանսպորտի վերաբերյալ Ժողկոմխորհի և Կենտկոմի վորոշումների հիման վրա, ծավալել հարվածայնությունն ու սոցմրցումը, տիրապետել տեխնիկան, մոբիլիզացիայի յենթարկել ուղիների բոլոր միջոցները և անմիջապես բարձրացնել նրանց փոխադրական ունակությունները։ Վերացնել փոխադրումների սեզոնային իջեցումը։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել շոգեկառքերի աշխատանքի ու նորոգման, վագոնների նորոգման և ուղիների շահագործման աշխատանքի բոլոր չափանիշների լրիվ կատարման վրա։ Անհրաժեշտ է նաև ավելի վճռական պայքար տանել ամեն տեսակ պատահարների լրիվ վերացման համար։

Միենույն ժամանակ կոնֆերանսը կոմունիստների և անկուսակցական ակտիվի կարեվորագույն խնդիրը համարում է 1934 թվի գլխավոր ներդրումների լրիվ յուրացումը, վորոնք ապահովում են ուղիների տեխնիկական սպառազինվածության հետագա բարձրացումը։

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում, վորպեսզի ուղիների վարչությունները և քաղբաժինները մշակեն ուղիների տեխնիկական վերակառուցման պլանը, վորպեսզի նրանք (ուղիները) ապահովեն յերկրորդ հնգամյակի փոխադրումների լրիվ յուրացումը։

Կոնֆերանսը պահանջում է, վորպեսզի վերջնականապես մերկացվեն սաբոտաժային տրամադրությունները Ժողկոմխորհի և Կենտկոմի վորոշումների դեմ, վերջ տրվեն անկազմակերպվածությանն ու թափթփվածությանը, և քաղբաժնի ղեկավարությամբ ապահովվի ուղու աշխատանքի յերկաթյա պրոլետարական կարգապահությունը, առանց վորի տրանսպորտը չի կարող նորմալ աշխատել։

Կոնֆերանսը մատնանշում է, որ գործնականում տեղական տերիտորիալ կազմակերպությունները դեռ ակտիվ չեն մասնակցում յերկաթուղային տրանսպորտի աշխատանքին, և պահանջում է ակտիվ ոգնություն ցույց տալ քաղաքաժիններին, առանձնապես կադրերի նկատմամբ և նյութական-կենցաղային պայմանների բարելավման համար տարվող պայքարում։

V. ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Առաջվա պես անբավարար են աշխատում պեստռեվորի ու սպառկոոպի և այլ առեվտրական կազմակերպությունները։ Որոնք հատուկ նշանակություն են ձեռք բերում բանվոր դասակարգի և գյուղացիության կապի ամրացման, քաղաքի յեվ գյուղի միջև ապրանքաշրջանառության զարգացման համար։ Կոնֆերանսը պարտավորեցնում է Յերկային Կոմիտեին միջոցներ ձեռք առնել բարելավելու աշխատանքի այդ կարևորագույն ճյուղերի ղեկավարությունը յեվ մասնավորապես.

ա) լայնացնել ու բարելավել պեստռեվորի ու կոոպերացիայի տորին ցանցը, հատկապես գյուղում (գյուղսպառկոոպ, կրպակ, խանութ).

բ) ամեն կերպ ամրացնել բանվորական մատակարարման բաժինները (ՕՐՍ), քաղաքամերձ տնտեսությունները, որոնց կազմակերպումն զգալիորեն բարելավեց բանվորների մատակարարման գործը.

գ) ամբողջ առեվտրական ցանցը դնել վարկի ու տնտեսահաշվարկի նոր պայմաններում։

Կոնֆերանսը խրախուսում է անհատական բանջարանոցների, բանվորների շրջանակում մանր տնտնապահության զարգացմանն ոգնող միջոցները (նայել անհատական շինարարությունը սովխոզներում) բանվորներին ձեռնարկություններում ամրացնելու վերաբերյալ փոխադարձ պայմանագրերի հիման վրա։

VI. ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՅԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Կոնֆերանսը գտնում է, որ տնտեսական հաջողությունները և գյուղի ու քաղաքի աշխատավորական մասսաների աճող քաղաքական ակտիվությունը լիովին ստեղծել են բոլոր անհրաժեշտ նախադրյալները կուլտուրական շինարարության հետագա զարգացման համար։ Հիմնական բնագավառները, որոնց

վրա պետք է կենտրոնանա յերկրամասի ամբողջ կուսակցական կազմակերպության ուշադրությունը, հանդիսանում են՝

1. Անգրագիտության լիակատար վերացումը մինչև 1934 թվի մայիսի մեկը և կիսագրագիտության վերացման պլանի ոնվերապահ կատարումը։ Որպես կարևորագույն քաղաքական խնդիր, կուսկոնֆերանսը դնում է 1912 թվի ծնված մինչև-նակոչիկների անգրագիտության և կիսագրագիտության վերացման լրիվ ավարտումը՝ մինչև 1934 թվի մայիսի մեկը։

2. Դպրոցի հետագա ամրապնդումն, ինչպես նրա նյութական ապահովման գործում (վերանորոգում, կահավորում, վառելիք, տաք նախաճաշ, զգեստ և կոշիկ), այնպես էլ, և առանձնապես, ուսումնական և դաստիարակչական աշխատանքների վրակը վճռականորեն բարձրացնելու գործում։ Կուսակցական ղեկավարության ուժեղացումը՝ պիոներական կազմակերպության վրա։

Վճռականը, առաջվա նման, մնում է պայքարը յերեխաների դիտելիքների և նրանց կոմունիստական ու բոլշևիկյան տրադիցիաների վոգով դաստիարակելու համար։

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Կոնֆերանսը ամբողջապես և լիովին միանում է կազմակերպչական հարցերի վերաբերյալ կուսակցության 17-րդ հատագումարին ներկայացրած ընկ. Կագանովիչի թեզիսներին։

Գտնելով, որ կուսակցության 17-րդ համագումարի առթիվ ընկ. Կագանովիչի թեզիսները՝ կազմակերպչական հարցերի (կուսակցական և խորհրդային շինարարության) մասին—սպառում են բոլոր հիմնական կազմակերպչական հարցերը, անհրաժեշտ է անմիջապես անցնել նրանց իսկական կենսագործմանը։ Անմիջապես վերակառուցել յերկրային, մարզային և ռայոնական կուսակցական և խորհրդային կազմակերպությունները՝ համապատասխան 17-րդ կուսհամագումարին ներկայացրած Կենտկոմի թեզիսներին։

Գտնելով միանգամայն ճիշտ և ժամանակին Հյուսիսային Կովկասի յերկրամասը յերկու յերկրամասերի (Ազով-Սևծովյան և Հյուսիսային Կովկասի) բաժանումը, ինչպես նաև Հյուսիսային մարզի առանձնացումը Ազով-Սևծովյան յերկրամասից [illegible] մում—կոնֆերանսը լիովին հավանություն է տալիս [illegible] առթիվ Կենտկոմի վորոշումներին և գտնում է, որ այդ [illegible] ցառումները պետք է իրենց հետ բերեն սոցիալիստական շինա-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ԵՐԵՎԱՆ

բարության բոլոր ընդգավառների ղեկավարման և աշխատանքի վճռական բարելավումը։

Հաշվի առնելով կոնկրետ պայմանները, կոնֆերանսը, բացի դրանից, պարտավորեցնում է Յերկրկոմին.

ա) գործնական միջոցառումներով առաջ մղել յետ մնացող ռայոնները, ՄՏԿ-ները սովխոզները և կոլխոզները։

բ) նվազագույն չափի հասցնել յերկրային ամեն տեսակի լիազորների ուղարկումը տեղեր։

գ) վճռականորեն վերջ տալ կադրերի, առանձնապես կուսկազմակերպությունների քարտուղարների, գյուղխորհուրդների նախագահների, կոլխոզների նախագահների և բրիգադիրների, ինչպես նաև սովխոզային կադրերի (դերեկտորների, բաժանմունքի կառավարիչների և այլն) հոսունությանը։

դ) կենտրոնացել վերջին շրջանում առաջ քաշված կադրերի, առանձնապես գյուղում, ինչպես նաև տեխնիկական կադրերի (տրակտորիստների, կոմբայնավորների) դաստիարակման և ուսման աշխատանքները։

ե) բարելավել յերկրային մասսայական կազմակերպությունների (խորհուրդներ, արհեստակցական միություններ, ՀԼԿՅԵՄ և այլն) ոպերատիվ ղեկավարությունը ձեռնարկությունների, կոլխոզների և սովխոզների իրենց ստորին կազմակերպությունների վրա, առանձնապես կադրերի ընտրության և հոսունության դեմ մղվող պայքարի հարցերում։

զ) կազմակերպել բանվորական և կոլխոզային մասսաների լայն հսկողություն՝ կուսակցության և կառավարության վորոշումները կատարելու համար։

Արմատականապես բարելավել կուսակցական ղեկավարությունը կոմյերիա կազմակերպությունների, առանձնապես նրանց ստորին ողակների վրա, հասնելով նրան, վոր լիովին կատարվի ՀԿԿ(բ) Կենտկոմի վորոշումը՝ «կոմյերիմիությանն ոգնելու միջոցառումների մասին»։ Մասնավորապես, կոմյերիմիության մեջ աշխատելու համար ամրացնել կուսակցական կորիզը։

Նշելով, վոր կուսակցական կազմակերպությունների և առաջին հերթին քաղբաժինների կողմից ծավալած մասսայական, քաղաքական և կազմակերպչական աշխատանքները ունեն նշանակելից արդյունքներ, առանձնապես գյուղում, համախմբելով կուսակցության շուրջը նշանակալից չափով կոլխոզային ակտիվ, և ակտիվ աշխատանքի մեջ քաշելով ծերերին, պիոներներին և կոլխոզնիկների ուրիշ շերտերին, կոնֆերանսը մատնանշում է, վոր քաղաքական և կազմակերպչական աշխատանքների հետագա զարգացումը, և մասնավորապես կոլխոզային ակտիվի աշխատանքի լայնացման և վորակի բարձրացման գործում շարունակում է մնալ կուսկազմակերպության գլխավորագույն խնդիրը։

Կոնֆերանսն առանձնապես ընդգծում է այն անհրաժեշտությունը, վոր կուսակցական, խորհրդային և արհեստակցական կազմակերպությունները պետք է ամենաուշադիր վերաբերմունք ցուցաբերեն դեպի բանվորների և կոլխոզնիկների կարիքները և նրանց աճող կուլտուրական կենցաղային պահանջների բավարարումը։

Կոնֆերանսը նշում է, վոր մի շարք տեղերում դեռ մինչև հիմա գոյություն ունի ձևական-բյուրոկրատական վերաբերմունք հանդեպ բանվորների, կոլխոզնիկների և հատկապես կոլխոզնիկուհիների կարիքները և պահանջները։

Կոնֆերանսը պարտավորեցնում է Յերկրկոմին վճռականորեն վերջ տալ բյուրոկրատիզմի այդ տարրերին, առանց անձնավորության խորության։

Կոլխոզային աշխատանքի, արտադրության և գյուղի հասարակական կյանքի մեջ կնոջ դերի հսկայական բարձրացման կապակցությամբ, կոնֆերանսը պարտավորեցնում է Յերկրկոմին, շրջկոմներին, քաղբաժիններին՝ համարձակ, անշեղ և սիստեմատիկ կերպով առաջ քաշել առաջավոր կոլխոզնիկուհիներին՝ կոլխոզների (կոլխոզի նախագահ, բրիգադիր), խորհրդների, գյուղկոոպների և այլն ղեկավար աշխատանքներում։

Նշելով յերիտասարդության աճող դերը՝ նոր մեքենայական տեխնիկայի տիրապետման գործում, առանձնապես գյուղում, վորտեղ հիմնական մեքենաները — տրակտոր, կոմբայն — սպասարկող կադրերն առավելապես յերիտասարդներից են,—կոնֆերանսը հավանություն տալով տեխնիկական ուսման գործում կոմյերիմիության աշխատանքին և միևնույն ժամանակ թերի գտնելով այդ աշխատանքը, կոմյերիմիության առաջ խնդիր է դնում.—յերիտասարդության մեջ տեխնիկային տիրապետելու և յերիտասարդության տեխնիկական գիտելիքների ու վորակավորման բարձրացման աշխատանքները 5—10 անգամ ավելի ծավալել։

Կոնֆերանսը հանձնարարում է կուսակցության և ՀԼԿՅԵՄ Յերկրկոմներին գումարել յերիտասարդության հատուկ համագումար՝ տեխնիկայի տիրապետման մասին։

Կուսակցական կազմակերպությունների հետագա ամրապնդման և կուսակցության անդամներին նոր կանոնադրության

պահանջների վրդով դաստիարակելու համար, վորը (կանոնադրությունը) պահանջում է ակտիվության, կարգապահության և մարքս-լենինյան քաղաքական սպառազինման հսկայական բարձրացումը, կոնֆերանսը պարտավորեցնում է.—

ա) մոտակա շրջանում ավարտել դուռը բոլոր կուսակցական կազմակերպությունների (գյուղական և քաղաքային).

Վճռականորեն պայքարել կուսակցության գլխավոր գծից ամեն տեսակի թեքումների, թե պրակտիկայում և թե թեորիայում արտահայտվող ոպորտունիզմի, ինչպես աջ, նույնպես և ձախ-լիկ խոտորումների (մասնավորապես Վեշենսկու, Իզոբիլնո—Տիշչենսկու գործի նման), հակահեղափոխական տրոցկիզմի դեմ։ Ինչպես աջ, այնպես էլ ձախ ոպորտունիզմը ըստ էության ներկա եռապում միացել են լենինյան կուսակցության դեմ անհաշտ պայքարելու հողի վրա։ Անհաշտ կերպով մաքրել շարքերը դասակարգայնորեն խորթ և թշնամի տարրերից, յերկերեսանիներից, հաշվողականներից և արտադրությանն անպատասխանատու վերաբերվողներից, կուսակցության և պետության յերկաթյա կարգապահությունը խախտողներից, վերասերվածներից, բյուրոկրատներից և բարոյապես այլասերվածներից.

բ) բարելավել կուսակցական կազմակերպությունների աշխատանքը՝ կուսակցության սոցիալական կազմի կարգավորման գործում այն հաշվով, վոր բարձրացվի արդյունաբերության մեջ աշխատող բանվորների տեսակարար կշիռը։

գ) քաղաքային կազմակերպություններից գյուղ ուղարկված լավագույն կոմունիստներին ամրացնել գյուղի աշխատանքներին։

դ) բարձրացնել գյուղական, տերիտորիալ և կոլխոզային կուսակազմակերպությունների ղեկավարության վորակը, ինչպես նաև ռայոնական կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ղեկավարության վորակը և հեղինակությունը։

ե) վճռականորեն պայքարել ՄՏԿ-ների, սովխոզների, տրանսպորտի քաղբաժինների աշխատանքը և քաղբաժինների մասին կուսակցության վորոշման նշանակությունը սվաղելու բոլոր փորձերի դեմ, ամրապնդելով և բարձրացնելով բոլշևիկյան կարգապահությունը կուսակցական բոլոր կազմակերպությունների աշխատանքներում։

զ) արդյունաբերական, կոլխոզային և տերիտորիալ բջիջների կոմունիստների դաստիարակական-քաղաքական մակարդակի

և տեխնիկական գիտելիքների բարձրացման համար հատուկ միջոցներ ձեռք առնել և բոլշևիկյան կարգ մտցնել կուսակցական ուսուցման գործում։

Ամբողջովին հավանություն տալով 17-րդ կուսհամագումարի թեզիսներին՝ 2-րդ հնգամյակի և կազմակերպչական հարցերի մասին, կոնֆերանսը գտնում է, վոր յերկրային կազմակերպությունն ունի բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ձեռնարկությունների, կոլխոզների, սովխոզների ղեկավարությունն արագ կերպով բարելավելու, գյուղատնտեսության և արդյունաբերության ասպարիզում արագ վերելքի, բանվորների և գյուղացիների միության հետագա ամրացման և դեռ 17-րդ կուսկոնֆերանսի կողմից դրված մեծագույն խնդիրների կատարման համար։

> «Յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը հանդիսանում է կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական վերացումը, դասակարգային տարբերություններ և շահագործում առաջացնող պատճառների վոչնչացումը և կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի բոլոր աշխատավոր բնակչության վերածումը անդասակարգ սոցիալիստական հասարակակարգի գիտակից և ակտիվ կառուցողների» (17-րդ կուսկոնֆերանս)։

Ազով-Սևծովյան կուսկազմակերպությունը պետք է լիովին հաշվի առնի գյուղում դասակարգային պայքարի սրման անցած շրջանի դասերը և հիշի, վոր՝ «այդ խնդիրների իրականացումը, վորոնք տանում են դեպի կապիտալիստական տարրերի վերջին մնացորդների արտամղում նրանց բոլոր հին դիրքերից և դատապարտում են նրանց վերջնական կործանման, չի կարող չառաջացնել դասակարգային պայքարի սրում կուլակների կողմից կոլխոզները քայքայելու նոր փորձեր, հակախորհրդային ուժերի կողմից մեր արդյունաբերական ձեռնարկությունների վնասարարական սաբոտաժ ստեղծելու փորձերը»։

Կուսկազմակերպությունը կարող է ապահովել յերկրամասի գյուղատնտեսության և արդյունաբերության հետագա արագ վերելքը՝ միայն այն պայմանով, յեթե չթուլացնի իր զգոնությունը հանդեպ դասակարգային թշնամու մնացորդների մեքենայությունները՝ վճռականորեն պայքարելով նրանց դեմ, յեթե անխնա հակահարված հասցվի ոպորտունիզմի յուրաքանչյուր արտահայտությանը և ինքնահոսին աշխատանքի մեջ, կազմա-

կերպչական—գործնական աշխատանքների վճռական բարելավմամբ և բանվորների ու կոլխոզնիկների ակտիվության հետագա բարձրացմամբ ու համախմբվածությամբ կուսակցության դիմավոր գծի կիրառման շուրջը։

Կոնֆերանսը հաստատ համոզված է, որ յերկրորդ հնգամյակում բանվորների նյութական և կուլտուրական մակարդակի, քաղաքական ակտիվության արագ աճը, ընկ. Ստալինի—«բոլոր կոլխոզները դարձնել բոլշևիկյան և բոլոր կոլխոզնիկներին ունևոր» լոզունգի կատարումը—կստեղծեն բոլոր պայմաններն աշխատավորության լայն մասսաներին սոցիալիստական հասարակարգի իսկական աշխատավորներ վերադաստիարակելու համար, գյուղի և քաղաքի դարավոր հակադրությունների վերացման գործում կապահովեն խոշոր քայլ դեպի առաջ, կստեղծեն բոլոր անհրաժեշտ նախապայմանները այդ հակադրությունները վերացնելու համար։

«Ներկայումս աշխարհն արդեն ընդհուպ մոտենում է հեղափոխությունների և պատերազմների նոր շրջանին» (ԿԻԳԿ XIII պլենումի թեզիսներից)—դա յերկրային կուսակցական կազմակերպության վրա հատուկ պատասխանատվություն է դնում բանվորագյուղացիական Կարմիր բանակի պատրաստականության համար, վորպեսզի նա ուղած բոպեին զգացնել տա պրոլետարական պետության հզորությունը։ Այդ պահանջում է ամենորյա ակտիվ ոգնություն Կարմիր բանակի կուսակցական կազմակերպությանը՝ նրա մարտական ուսուցման և յերկրի պաշտպանունակության գործում (հատկապես միջհավաքային աշխատանքների, պրոլետարական շեֆության և կուլտուրական ոգնության, կադրերի ամրացման և Պաչը-Ավիաքիմի աշխատանքների, պահեստի պատրաստման և ԲԳԿԲ ձիու ֆոնդը ամրացնելու ասպարիզում)։

Կոնֆերանսը կոչ է անում բանվորներին, կոլխոզնիկներին և աշխատավորներին ել ավելի ամրապնդել բանվորագյուղացիական պետության պաշտպանունակությունը։ Գերմանական ֆաշիստներին և Ցապոնական զինվորականության պրովակացիաներին պատասխանենք՝ ամեն մի գործարան, սովխոզ և կոլխոզ պրոլետարական հեղափոխության անառիկ ամրոցը դարձնելով։

Կուսակցական կազմակերպությունները պետք է լավ հիշեն իրենց պարտավորությունները ֆաշիզմի և ճգնաժամի ճնշման տակ գտնվող և նոր ու վճռական պրոլետարական մարտերին պատրաստվող կապիտալիստական յերկրների յեղբայրական կոմկուսակցությունների և բանվորների նկատմամբ և դրա համար

պետք է ամրացնեն ԽՍՀՄ-ի պաշտպանությունը և սոցիալիստական տնտեսությունը։

Կուսակցության և միջազգային պրոլետարիատի մեծ առաջնորդ ընկ. Ստալինի իմաստուն ղեկավարությամբ, կուսակցությունը հաղթականորեն կենսագործում է Լենինի կողմից նախագծված սոցիալիզմի շինարարության պլանը մեր յերկրում, ԽՍՀՄ դարձնելով պրոլետարական հեղափոխության անխախտ հենարանը ամբողջ աշխարհում և հենց դրանով ել բարձրացնում և հախմբում է միջազգային պրոլետարիատի ուժերը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Յերկրորդ հնգամյակի և 1934 թվի հսկիչ թվերի մասին . . . 8
II. Գյուղատնտեսության ասպարեզում 8
III. Արդյունաբերության ասպարեզում 11
IV. Յերկաթուղային տրանսպորտը 15
V. Ապրանքաշրջանառություն 16
VI. Կուլտուրային և լուսավորության ասպարեզում 16
VII. Կազմակերպչական հարցեր 17

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ [illegible] ССР
Ա. им А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Отв. по выпуску [illegible]ОВЯН

Тех. ред. О. Т[illegible]Р-Д[illegible]ВИДОВ
Сдано в набо[illegible] 15-II-1934 г.
Партиздат г. [illegible]остов н-Д. Изван 687
Формат бума[illegible] А5 148×210
Уполкрайлит [illegible] В-497

Подписано в печать 27-II-1933 г
Об'ем 1,5 печ. листе.
Знаков в одном печать, листе 38588
Заказ 955
Тираж 1500 экз.

Типография и[illegible], „[illegible] 1902 года" СКПТ в г. Ростове на Дону

Գին Цена 10 կոպ. Коп. 6466

Первая Азово-Черноморская конференция ВКП (б)

РЕЗОЛЮЦИЯ
ПО ДОКЛАДУ Т. ШЕБОЛДАЕВА О РАБОТЕ КРАЙКОМА

19—22 Января 1934 г.

На армянском языке

СКЛАД ИЗДАНИЯ
Ростов на Дону
Ул. Ф. Энгельса, 90
ПАРТИЗДАТ

ՀՀ Ազգային գրադարան
NL0188327